ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի

18/02/2022 **երկու հազար քսաներկու թվականի փետրվարի տասնութ**

Մենք ՎԱՀԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԶԻՐՈՅԱՆՆ, ծնված՝ 09/01/1963թ-ին, ՀՀՀ՝ 1901630323, անձնագիր՝ 003460789, տրված՝ 016-ի կողմից, 24/01/2013թ-ին, հաշվառված՝ ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 87 Շ, 31ԲՆ, ԿԱՐԻՆԵ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԶԻՐՈՅԱՆՆ, ծնված՝ 19/09/1966թ-ին, ՀՀՀ՝ 6909660250, անձնագիր՝ AP0476681, տրված՝ 016-ի կողմից, 22/07/2016թ-ին, հաշվառված՝ ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 87 Շ, 31ԲՆ,*այսուհետև՝ <<Վարձատուներ>> մի կողմից և* «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ» Պետական մարմին, հասցե՝ ԿԵՆՏՐՈՆ Մ.ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ. / 3,7, գրանցման համար՝ 286.184.1025088, ՀՎՀՀ՝ 02647057, *ի դեմս գլխավոր քարտուղար* ՝ԷԴԳԱՐ ԺՈՐԱՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ծնված՝ 30/10/1969թ-ին, ՀՀՀ՝ 4010690054, նույնականացման քարտ՝ 000749879, տրված՝ 011-ի կողմից, 02/12/2012թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԱՂԱՅԱՆ Փ., 7 Շ, 20ԲՆ, *որի անունից համաձայն թիվ 1/18-1/9120-2022 լիազորագրի տրված՝ 11.02.2022թ. /երկու հազար քսաներկու թվականի փետրվարի տասնմեկին/ հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության Շիրակի տարածաշրջանային բաժնի պետի տեղակալ* ԱՐԱՄ ԱՇՈՏԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԸ , ծնված՝ 31/01/1979թ-ին, ՀՀՀ՝ 4101790310, նույնականացման քարտ՝ 006740450, տրված՝ 006-ի կողմից, 19/11/2015թ-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ Փ., 35/77,35/78 S /*այսուհետև՝ <<Վարձակալ>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.*

1. Պայմանագրի առարկա

1.1 Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Շահումյան փողոց, շենք 188ա /հարյուր ութսունութ «ա»/ բնակարան 60 /վաթսուն/ հասցեում գտնվող բնակարանը՝ 35 /երեսունհինգ ամբողջ / քմ մակերեսով, /այսուհետ՝Գույք/:

1.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին, ինչը հավաստվում է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի տարածքային սպասարկման Գյումրի գրասենյակի կողմից 15/08/2007թ./տասնհինգը օգոստոսի երկու հազար յոթ թվականին / տրված թիվ 2404969 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով:

1.3 Համաձայն Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանման կողմից 17/02/2022թ./տասնյոթը փետրվարի երկու հազար քսաներկու թվականին / տրված թիվ ՄՏ-17022022-08-0264 միասնական տեղեկանքի՝ վերը նշված գույքի վրա գրանցված է սահմանափակումներ , գրավի իրավունք <<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ –ի կողմից, սակայն առկա է բանկի համաձայնությունը՝տրված 18/02/2022թ. -ին/տասնութը փետրվարի երկու հազար քսաներկու թվականին/, համաձայնություն թիվ O.AB.715.11RBD.CSD..11.22, որը ներառում է հետևյալ պայմանները՝

1.Վարձակալության հանձնվող գույքը ծանրաբեռնված է <<Ամերիաբանկ>>ՓԲԸ -ի գրավի իրավունքով և վերջինս , հանդիսանալով վարձակալվող գույքի նկատմամբ գույքային իրավունքի տիրապետող, իրավունք ունի որպես շահագրգիռ անձ ցանկացած ժամանակ կողմերից պահանջել վաղաժամկետ լուծելու վարձակալության պայմանագիրը:

Բանկի այդ պահանջը պարտադիր է Կողմերի համար պահանջը ստանալուց հետո 3/երեք/ ամսվա

ընթացքում՝ կատարելով այդ լուծման նոտարական վավերացում և դրանից բխող վարձակալի իրավունքների դադարեցման գրանցում ՀՀ ԿԱ Անշարժ գույքի պետական կադաստրում:Հակառակ դեպքում՝ բանկի պահանջը հիմք է հանդիսանում Վարձակալության իրավունքը գրանցած ՀՀ իրավասու պետական մարմնի համար՝ վարձակալության պայմանագիրը լուծված համարելու և վարձակալի՝ վարձակալած գույքի նկատմամբ ունեցած իրավունքների դադարումը գրանցելու համար:Վարձակալը Բանկի պահանջը ստանալուց հետո 3/երեք/ ամսվա ընթացքում պարտավոր է ազատել վարձակալած գույքը: Սույն կետի ուժով Վարձակալած գույքի նկատմամբ Վարձակալի ունեցած իրավունքների դադարումը գրանցելու համար Կողմերի համաձայնությունը համարվում է տրված:

Պայմանագրի սույն կետը չի կարող փոփոխվել կամ հանվել առանց <<Ամերիաբանկ>> ՓԲԸ -ի գրավոր համաձայնության:

2.Վարձակալության պայմանագրի պատճենը պետք է տրամադրվի <<**Ամերիաբանկ>>ՓԲԸ -ին**՝ որպես վարձակալած գույքի գրավառու:Սույն համաձայնությունը ուժի մեջ է տրման պահից երեսուն օրացուցային օրվա ընթացքում: Սույն գրության մեջ նշված պայմաններից նույնիսկ մեկը խախտվելու դեպքում՝ սույն համաձայնությունը կհամարվի իրավաբանական ուժ չունեցող և այլ տրման պահից կհամարվի առոչինչ:

1.4 Վարձակալության հանձնված Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծարելու կամ փոփոխելու համար:

2. Պայմանագրի գործողության ժամկետը

2.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Գույքը Վարձատուն պարտավոր է հանձնել հանձնման-ընդունման ակտով: Հանձնման-ընդունման ակտը ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:

2.2. Սույն պայմանագիրը գործում է մինչև 01.12.2022 /երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի մեկ/:

Եթե սույն պայմանագրի 2.2 կետում նշված ժամկետի ավարտից առնվազն մեկ ամիս առաջ կողմերից ոչ մեկը գրավոր չի տեղեկացնում մյուս կողմին պայմանագրի դադարեցման մասին, ապա սույն պայմանագիրը ժամկետի ավարտից հետո շարունակում է գործել և համարվում է կնքված անորոշ ժամկետով:

3. Վարձավճարը և վճարման կարգը

3.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Գույքի ամսական վարձավճարը կազմում է 78000 (յոթանասունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ներառյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարկերը և պարտադիր այլ վճարներ, որը համասեփականատեր՝ այսուհետ <<Վարձատու>>, Կարինե Վոլոդյայի Զիրոյանի համաձայնությամբ փոխանցվելու է Վահան Արշալույսի Զիրոյանի անվամբ <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ում բացված թիվ Հ/Հ 1570026509660100 հաշվին:

3.2 Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը Վարձակալը Վարձատուին է տրամադրում ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 20-րդ աշխատանքային օրը, իսկ դեկտեմբեր ամսվա համար, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

3.3 Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

3.4. 2022թվականի համար վճարման ժամանակացույցը կցվում է սույն Պայմանագրին /Հավելված 1/ և համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:

3.5 Վարձակալը հանձման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վարձատուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.6 Եթե պայմանագրի 3.4 կետով սահմանված ժամկետում Վարձակալը չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը

համարվում է ընդունված և պայմանագրի 3.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Վարձատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:
3.7 Սույն պայմանագրով կողմերի ստանձնվող իրավունքները և պարտականությունները տարածվում են 01.12.2021թ.-ից /երկու հազար քսանմեկ թվականի դեկտեմբերի մեկ/ ծագած հարաբերությունների նկատմամբ, իսկ վճարումները կիրականացվեն լիազոր մարմնի կողմից պայմանագիրը հաշվառվելուց հետո:

4. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

4.1. Վարձատուն իրավունք ունի՝

Վարձակալից պահանջել Գույքն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխան:
Վարձակալի կողմից վարձավճարը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել մուծելու վարձավճարը:
Պահանջել լուծարելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ գույքի նշանակությանն անհամապատասխան.
Վարձակալին գրավոր տեղեկացնել գույքն ազատելու անհրաժեշտության մասին մեկ ամիս առաջ:

4.2. Վարձատուն պարտավոր է՝

Գույքը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում:
Գույքը Վարձակալին հանձնել դրա բոլոր պատկանելիքներով և դրան վերաբերվող փաստաթղթերով:
Վարձակալին նախազգուշացնել գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների /գրավ և այլն/ մասին:

4.3. Վարձակալն իրավունք ունի՝

Վարձատուից պահանջել իրեն տրամադրել գույքի պատկանելիքները ու դրան վերաբերյալ փաստաթղթերը.
Գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններն հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝
Վարձատուից պահանջել անհատույց վերացնելու գույքի թերությունները կամ համաչափ իջեցնել վարձավճարը:
Վարձատուին գրավոր տեղեկացնել գույքն ազատելու անհրաժեշտության մասին մեկ ամիս առաջ:

4.4. *Վարձակալը պարտավոր է՝*

Ժամանակին վճարել գույքն օգտագործելու համար 2-րդ կետով նախատեսված վարձավճարը, կատարել բոլոր հարկային պարտավորությունները, ինչպես նաև վճարել գույքի օգտագործման արդյունքում առաջացած կոմունալ ծախսերը /էլեկտրաէներգիա, ջուր, գազ, հեռախոս և այլն/:
Գույքը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել Գույքը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը:
Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

5.Կողմերի պատասխանատվությունը

5.1. Վարձատուն պատասխանատվություն չի կրում Գույքի թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի կողմից հայտնաբերվեին Գույքը զննելիս կամ վարձակալության հանձնելիս:
5.2. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

6.1.Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝
6.1.1.Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով:
6.1.2.Էականորեն վատթարացրել է Գույքի վիճակը:
6.1.3.Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո 2 անգամից ավելի չի մուծել վարձավճարը:
6.2.Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե՝
6.2.1.Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել Գույքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն համապատասխան օգտագործելու համար:
6.2.2.Վարձակալին հանձնված Գույքն ունի դրա օգտագործմանն խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին և վերջինս չէր կարող հայտնաբերել պայմանագիրը կնքելիս:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ֆորս մաժոր)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1.Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում /երեսուն աշխատանքային օրվա ընթացքում/:

8.2.Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված են նոտարի կողմից և գրանցված են Կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

8.3.Պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են Վարձակալի կողմից:

8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննության:

8.5. Պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվում են Վարձակալի կողմից: Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է <<Շիրակի մարզ>> նոտարական տարածքի նոտարական գործում, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանում՝ գրանցելու համար:

Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող կողմերը հայտարարեցին, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:

Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական տարածքում պահվող օրինակին:

9. Պայմանագրի գործողությունը.

9.1.Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանումում գրանցելու պահից:

Կողմերի վավերատարրերը և ստորագրությունները

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>
ՎԱՀԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԶԻՐՈՅԱՆԻ _____
<<ԱՄԵՐԻԱԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1570026509660100

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>
ԿԱՐԻՆԵ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԶԻՐՈՅԱՆ _____

<<ՎԱՐՁԱԿԱԼ>>
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ» Պետական մարմին, հասցե՝ ԿԵՆՏՐՈՆ Մ.ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ. / 3,7, գրանցման համար՝ 286.184.1025088, ՀՎՀՀ՝ 02647057, Հ/Հ 900011054013, Կենտրոնական գանձապետարան Գործառնական վարչություն, ի դեմս գլխավոր քարտուղար՝ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ում անունից լիազորագրով հանդես է գալիս

ԱՐԱՄ ԱՇՈՏԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ _____

Նոտարական ակտի կոդ: 605-20220218-37-5708849
Նոտարական ակտի գաղտնագիր: V106T3

Հայաստանի Հանրապետության անունից 18/02/2022 երկու հազար քսաներկու թվականի փետրվարի տասնութ

Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ <<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ>> նոտարական տարածքի նոտար՝ ՀԱՅԿԱՆՈՒՇ ԼԵՎՈՆԻ ՖԵՆԴՅԱՆԻՍ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև ներկայացուցչի (ների) լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ սեփականատիրոջ իրավունք(ներ)ը ստուգված են: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է գրանցամատյանում թիվ ---1220---ով

Գանձված է պետական տուրք մեկ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Հայկանուշ Լևոնի Ֆենդյան

Հավելված 1

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	բյուջետային ծախսերի տնտես. դասակ. հոդվածը	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ՀՀ ՊԵԿ 2022թ-ին բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	CPV 70311200/1	4216	տարածքների վարձակալության ծառայություններ	78 000	156 000	234 000	312 000	390 000	468 000	546 000	624 000	702 000	780 000	858 000	1 014 000	1 014 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՎԱՐՁԱՏՈՒ

Վահան Արշալույսի Զիրոյանի
<<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1570026509660100

/ստորագրություն/

ՎԱՐՁԱՏՈՒ

Կարինե Վոլոդյայի Զիրոյան

/ստորագրություն/

ՎԱՐՁԱԿԱԼ

«ՀՀ պետական եկամուտների կոմիտե»
Հասցե՝ ք. Երևան, Մովսես Խորենացու փ. 3,7
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն
Հ/Հ 900011054013
ՀՎՀՀ 02647057
Էդգար Գևորգյանի կողմից
լիազորված անձ՝
Արամ Աշոտի Գասպարյան

/ստորագրություն/

659